ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 07 ապրիլ 2018թ.

[redacted] (ծնված [redacted]թ., նույնականացման քարտ [redacted] տրված [redacted]-ի կողմից), այուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից և ″ԷԿՈՏՈՒՆ″ ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ [redacted] գրանցման համար [redacted] հասցե՝ ք Երևան, Գ. Հարաթյան 21տ.), այսուհետ՝ ″Կատարող″, ի դեմս՝ տնօրեն [redacted] որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

Պայմանագրի առարկան

Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից տրված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա և լիազորագրի սահմաններում և Պատվիրատուի անունից պատրաստել ---------- հասցեում Պատվիրատուի կողմից պլանավորված բնակելի առանձնատան կառուցման շինարարական աշխատանքների սկսման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, որը իր մեջ ներառում է՝ աշխատանքային նախագիծ իր մեջ ներառելով համապատասխան լիցենզիայի պատճենը և շինթույլտվությունը:

Պատվիրատուն պարտավոր է՝

Վճարել Կատարողին վերը նշված ծառայության դիմաց ընդհանուր առմամբ 2500000դրամ (երկու միլիոն հինգհարյուր հազար ՀՀ դրամ) գումար պայամանագրի ստորագրման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Պայմանագիրը ուժի մեջ է մտնում վերը նշված ժամկետում Պատվիրատուի կողմից վճարումը կատարելուց հետո: Պայմանագիրը ամբողջովին ուժը կորցնում է համապատասխան կազմված կատարողական ակտի ստորագրման պահին:

Եզրափակիչ դրույթներ

Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է երրորդ անձանց որևէ կերպ չհրապարակել սույն պայմանագրի հետ կապված և/կամ պայմանագրի կատարման ընթացքում հայտնին դարձած կոմերցիոն, ֆինասական ու տեխնիկական բնույթի տեղեկատվություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվախ դեպքերի:

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով , երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Պատվիրատու՝ [redacted] (ծնված [redacted]թ., նույնականացման քարտ [redacted] տրված [redacted]-ի կողմից) Անուն Ազգանուն /ստորագրություն	Կատարող՝ ″ԷԿՈՏՈՒՆ″ ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ [redacted] հասցե՝ ք Երևան, Գ. Հարաթյան 21տ.) Էվոկաբանկ ՓԲԸ Հ/Հ 16600-03870340100 Տնօրեն՝ [redacted] Կ.Տ. /ստորագրություն